ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«09» փետրվարի 2018թ. № 38-Հ

ՀՐԱՄԱՆ

«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՐՊԵՍ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31.2-րդ հոդվածի 2-րդ մասը և 3-րդ մասի «բ» կետի պահանջը և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 2018 թվականի հունվարի 29-ին «ԱՍԱՏՐՅԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ թիվ 03/24-2/1328-18 գրությամբ հարուցված վարչական վարույթի նյութերը ու ղեկավարվելով ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի թիվ 503-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրության 11-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» կետի պահանջը խախտելու համար «ԱՍԱՏՐՅԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել նախազգուշացում:
2. Սահմանել 10-օրյա ժամկետ «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» կետի պահանջի կատարումն ապահովելու համար:
3. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով՝ իրագեկելուն հաջորդող օրվանից:

Վ. ԱՐԱՄՅԱՆ